կարգելով նոցա վերայ կառավարիչ Խաշրամ ալ
Սուլամի'ին, նա մեկնեցաւ Շարվանի տիրոջ ամրոցը,
որ Խիրշ կը կոչուէր եւ ծովին մօտ էր. նա հնազան-
դեցաւ նորան, իջնելով դաշտային տափարակը.
Մրրվան դրեց բնակչաց վերայ 10.000 մոդ-
տուրք: Շիրվանի տիրոջ վերայ պարտաւորութիւն
դրեց՝ առաջաւոր գնդում գտնուել ամէն ան-
գամ, երբ մուսլիմները արշաւելու լինին Խազարաց
երկիրը, իսկ վերադարձին՝ յետապահ գնդում.
Ֆիլանշահ պարտաւոր էր միայն նոցա արշաւանքին
մասնակցել, իսկ Տաբարսարանշահ՝ յետապահ
գնդում գտնուել արշաւելիս եւ վերադարձին՝
առաջաւոր զօրքում: Մրրվան եկաւ Ծոդէից եր-
կիրը եւ պատերազմեցաւ բնակչաց հետ:

Երբ նորան հասաւ Վալիդ Ի. Եզիդի սպան-
ման (744 թ.) լուրը, նորա դէմ ապստամբեցաւ
Ջաբիտ Ի. Նուէյմ ալ Ջուզամի. գալով Մու-
սաֆիր ալ Քասսաբու մօտ (որին Ջոհակ[1] Խարի-
ջականն[2] Բաբի (Դերբենդի) վերայ քաղաքապետ
էր նշանակել), նա գտաւ նորան իրան համամիտ.
սա դրեց Մուսաֆիրին կառավարիչ Հայաստանի
եւ Ատրպատականի վերայ, իսկ ինքն գաղտ եկաւ
Արտաւիլ. նորա հետ միացաւ քաղաքի գռեհիկ
ժողովուրդը. (ապստամբք) եկան Բաջարւան[3] եւ
գտան իրանց համամիտներ, որոնք միացան նոցա
հետ, նոյնպէս եւ Վարդանակերտում շատերը.
նոյնը տեղի ունեցաւ, երբ ապստամբք անցան Փայ-
տակարան: Ապա Մուսաֆիր մնաց Տումանում:

---

[1] Ջոհակ Ի. Կէս Աշշէյբանի, Խարիջականաց զօրա-
գլուխը, որ 745 թ. գրաւեց Բաբելոն:

[2] Խարիջականք, որոնք 6 գլխաւոր աղանդների կը
բաժանին, կը նզովեն Օսմանին եւ Ալիին եւ սրբազան
պարտականութիւն կը համարեն ապստամբիլ ընդհանուր
իմամի դէմ:

[3] Ըստ Jakutի քաղաքս կը գտնուէր Շրուանից
ոչ հեռի: